Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.09.2018թ.
Ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Ռ. Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Գ. Խորենյան
Ա. Գրիգորյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի նախագահ Մ. Քյուրքչյան

1. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ռ. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝

- 28.08.2018թ. հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 28.08.2018թ. ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (30.08.2018թ. դրությամբ) ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Հավելված 5.2-ի աղյուսակով հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Մարգար Մարգարյանի որակավորումը նշված է ճարտարագետ-էներգետիկ (էլեկտրիկ), սակայն ըստ դիպլոմի Մարգար Մարգարյանն ունի քիմիկա-տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման ինժեների որակավորում.

2) 24.02.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/46-3 պայմանագրի մասով 24.07.2017թ. դուրս գրված Բ5891037439 և Բ3005069578 հաշիվ ապրանքագրերը հաստատված են միակողմանի.

3) Բացակայում են 10.05.2018թ. կնքված N ՓՀԲՏ-ԳՀԱՇՁԲ-18/16 պայմանագրի 8.13 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը, ինչպես նաև ներկայացված Ծավալաթերթ-նախահաշվից և Օրացուցային գրաֆիկից չի երևում, որ դրանք հանդիսանում են N ՓՀԲՏ-ԳՀԱՇՁԲ-18/16 պայմանագրի հավելվածները.

4) Բացակայում են 27.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/68 պայմանագրի 8.12 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը: Ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունից և հաշիվ ապրանքագրից հնարավոր չէ պարզել պայմանագրի ողջ ծավալով կատարված լինելու հանգամանքը (պայմանագրի ընդհանուր գինը 4 338 304 ՀՀ դրամ է, իսկ հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ ապրանքագիրը ներկայացված են 3 549 860 ՀՀ դրամի):

գ) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունների մասին 04.09.2018թ. ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (05.09.2018թ. դրությամբ) շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ռ. Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

4. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Ռ. Եղիազարյան

Անդամ՝ ---------- Գ. Խորենյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան